# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

## ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2026/25 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Արտաշատ — «23» «ապրիլի » 2026թ.

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ — ժամը՝ 11:00

**Հանձնաժողովի նախագահ՝**

Բուժական գծով փոխտնօրեն — Աղասի Մաhտեսյան

**Անդամներ՝**

Հաշվապահ — Հասմիկ Սահակյան

Դեղագործ — Սոֆի Գևորգյան

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Մենեջեր ֆինանսական բնագավառում — Հասմիկ Մկրտչյան

### ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2026/25 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2026/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հաստատեց նիստի հետևյալ օրակարգը՝

1. Տեղեկատվություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին
2. Տեղեկատվություններ ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2026/25» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ
3. Տեղեկատվություն հայտ ներկայացրած կազմակերպությունների վերաբերյալ
4. Տեղեկատվություններ հարցումների և պատասխանների վերաբերյալ
5. Տեղեկատվություններ բացված յուրաքանչյուր հայտի և հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.
6. Հանձնաժողովի կայացրած որոշումները

### 1.ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱԶՈՐ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովը բաղկացած է չորս անդամից և հանձնաժողովի նիստին մասնակցում են հանձնաժողովի բոլոր անդամները ,հետևաբար ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն , հանձնաժողովի նիստը համարել իրավազոր և հայտարարել բացված:

2. ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2026/25» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ

2.1« ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2026/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2026թ. Ապրիլի 21-ը ժամը 14:00-ն: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2026թ.ապրիլի 22-ին ժամը 14:00-ին՝ eauction.armeps.am համակարգի միջոցով:

3. Տեղեկատվություն հայտ ներկայացրած կազմակերպությունների վերաբերյալ

3.1 Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| N | Մասնակիցների անվանումը | Հեռախոս, հասցե |
|---|---|---|
| 1 | ԱՐՍԵՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ | ԵՐԵՎԱՆ, ՆՈՐ ՆՈՐՔ, Մոլդովական 60 0062 հեռ. 095966698, ՀՎՀՀ 01091058, h/h 22031351115000 ,էլ. Հասցե vidtardan@gmail.com |
| 2 | ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ ՍՊԸ | ---- |

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

4. Տեղեկատվություն հարցումների և պատասխանների վերաբերյալ

4.1 Հարցում է կատարվել.

Հարգելի գործընկեր սույն աճուրդի տեխնիկական բնութագրում օգտագործվել են հղումներ կոնկրետ արտադրողին, մասնավորապես / HF2319,5 Atraumatik, dual action/-ը դա Mit Medica ընկերության բիպոլյար սեղմիչի միջուկի մոդելն է, HF2007.9, HF2004.13 KW և HF2017.4-ն Mit Medica ընկերության էնդովիրաբուժական գործիքներ են: Գնումների մասին օրենսդրությամբ արգելվում է օգտագործել հղումներ կոնկրետ արտադրողին, ապրանքային նշանին, իսկ առանց հղում կատարելու ապրանքը նկարագրելու անհնարինության դեպքում՝ պետք է օգտագործել <<կամ համարժեք արտահայտությունը>>:

4.2 պարզաբանում է ներկայացվել ․

Հարցելի մասնակից հրավերում ներկայացված հավելվածում հստակ ներկայացված է՝ ապրանքներին առաջադրված պայմաններն են բոլոր հղումների դեպքում հասկանալ «կամ համարժեք» արտահայտությունը, համաձայն ՀՀ գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջի։։

*Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0*

**5.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտի և հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.**

5.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

5.2 «ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից կցված հայտի 3–րդ չափաբաժնի մասով ներկայացված հավելված 1-ում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը , հավելված 1.3 չի ներկայացվել , ապրանքի ամբողջական նկարագրում ՝ ֆիրմային անվանում, ապրանքային նշանը, մակնիշը , արտադրող կազմակերպության անվանումը և տեխնիկական բնութագիրը սխալ է լրացված:

*Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0*

**6.<<ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2026/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին**

**<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց</u>**

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցել «ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ -ին , որպեսզի սահմանված ժամկետում շտկեն նշված անհամապատասխանությունները:

6.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2026 թվականի ապրիլի 28 -ին , ժամը 10:00-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

| | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | Ա. Մահտեսյան | [signature] |
| Անդամներ՝ | Հ. Սահակյան | [signature] |
| | Ս. Գևորգյան | [signature] |
| Քարտուղար՝ | Հ. Մկրտչյան | [signature] |